



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

27 Տայրաթ 2019 թ. № 92 - Ա/1  
ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ»  
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ, ՀԱՅՏԻ ՁԵՎԸ, ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ  
2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի № 121-Ա/1 ՀՐԱՄԱՆՆ  
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 4-րդ և 5-րդ մասերի՝ հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի,

2) «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտի ձևը՝ համաձայն № 2 հավելվածի,

3) «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ համաձայն № 3 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի մայիսի 23-ի ««Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կանոնակարգը, կազմկոմիտեի կազմը, հայտի ձևը և հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» № 121-Ա/1 հրամանը:

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԿԱ ԵՐԻՏԱՍԱՐԴՊԵՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» ՄՐՑՈՒՅԹԻ

#### I. Ընդհանուր դրույթներ

1. «Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» հասկացությունը (այսուհետ՝ Մայրաքաղաք) կարգավիճակ է, որը «Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) արդյունքում շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքի կարգավիճակ ունեցող քաղաքին կամ համայնքի կազմի մեջ մտնող քաղաքին՝ մեկ տարի ժամկետով: Մայրաքաղաքը հնարավորություն է ստանում այդ մեկ տարվա ընթացքում իրականացնելու երիտասարդների սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային, մարզական ակտիվությանը նպաստող ծրագրեր:

2. Մրցույթը նպաստում է նորարարական ծրագրերի ստեղծմանը և իրագործմանը՝ կապված Հայաստանի Հանրապետության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության հետ:

3. Մայրաքաղաքի կարգավիճակը Մայրաքաղաքի երիտասարդական կազմակերպությունների համար հնարավորություններ է ստեղծում մասնակցելու հանրապետական մակարդակով որոշումների ընդունմանը, ձեռք բերելու նոր գիտելիքներ, հմտություններ, գործընկերներ, զարգացնելու միջազգային համագործակցությունը երիտասարդության ոլորտում:

#### II. Մրցույթի հիմնադիրները և կազմակերպիչները

4. Մրցույթի կազմակերպիչն է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

#### III. Մասնակիցները

5. Մրցույթի մասնակիցներն են (այսուհետ՝ Մասնակիցներ) Հայաստանի Հանրապետության համայնքի կարգավիճակ ունեցող քաղաքները կամ համայնքի կազմի մեջ մտնող քաղաքները (այսուհետ՝ Համայնք): Մրցութային հայտը (այսուհետ՝ Հայտ) ներկայացվում է համայնքապետարանի կողմից Համայնքում երիտասարդական ոլորտում գործունեություն ծավալող առնվազն երկու հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ: Յուրաքանչյուր Մասնակից կարող է

ներկայացնել մեկից ոչ ավել Հայտ: Նույն Համայնքը չի կարող երկու անգամ անընդմեջ ճանաչվել Մայրաքաղաք:

6. Երևան քաղաքը Մրցույթին մասնակցել չի կարող:

#### **IV. Մրցույթի նպատակները**

7. Մրցույթի նպատակներն են՝

1) նպաստել Հայաստանի Հանրապետության համայնքների համաչափ զարգացմանը.

2) զարգացնել երիտասարդական նախաձեռնողականության, երիտասարդական քաղաքականության ոլորտում համայնքների միջև բարեխիղճ և գործընկերային հարաբերությունները՝ ինչպես տեղական և հանրապետական, այնպես էլ միջազգային մակարդակում.

3) խրախուսել Հայաստանի Հանրապետության համայնքային իշխանություններին՝ տեղական մակարդակում մշակելու արդյունավետ երիտասարդական քաղաքականություն.

4) նպաստել մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառուցների զարգացմանը:

#### **V. Մրցույթի կազմկոմիտեն և փորձագիտական հանձնաժողովը**

8. Մրցույթի անցկացման համար յուրաքանչյուր տարի ստեղծվում են Մրցույթի կազմկոմիտե (այսուհետ՝ Կազմկոմիտե) և փորձագիտական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

9. Կազմկոմիտեի և Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո:

10. Կազմկոմիտեն բաղկացած է 7 անդամից, որոնցից 4-ը ներկայացնում են պետական մարմինները, իսկ 3-ը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունները: Կազմկոմիտեի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարը:

11. Կազմկոմիտեն ապահովում է Մրցույթի բնականոն և թափանցիկ կազմակերպումը:

12. Հանձնաժողովը կազմված է 10 փորձագետներից, որոնք ընտրվում են Կազմկոմիտեի կողմից՝ համաձայն ներկայացված հայտերի: Փորձագետը չի կարող Կազմկոմիտեի անդամ լինել:

13. Կազմկոմիտեն սահմանում է Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի ընդունման և Մրցույթի արդյունքների հայտարարման ժամկետը՝ սույն Կանոնակարգում ամրագրված դրույթներին համապատասխան:

14. Հանձնաժողովը, առաջնորդվելով սույն կանոնակարգով՝ իրականացնում է մրցութային հայտերի փորձագիտական գնահատումը:

#### **VI. Մրցույթի անցկացման կարգը**

15. Մրցույթն անցկացվում է ամեն տարի:

16. Մրցույթի անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը (Մասնակիցների նկատմամբ պահանջներ, Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի ընդունման